ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«28» հոկտեմբերի 2012թ. թիվ 1039-Ա

ՀՐԱՄԱՆ

ԽԱՂԱՏՆԵՐ, ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐ ԵՎ ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի մայիսի 23-ի N 450-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության բիզնես գործընթացների կանոնակարգման միջոցառումների ծրագրի 8-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել խաղատներ, շահումով խաղեր և վիճակախաղեր կազմակերպող տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացվող հաշվետվությունների ընդունման և վերլուծման կարգը՝ համաձայն հավելվածի.
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

ՆԱԽԱՐԱՐ **Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Ֆինանսների նախարարի

2012 թվականի Դեկտեմբերի 28**-ի**

N 1039-Ն **հրամանի**

ԿԱՐԳ

ԽԱՂԱՏՆԵՐ, ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐ ԵՎ ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով ամրագրվում են խաղատներ, շահումով խաղեր և վիճակախաղեր կազմակերպող տնտեսվարող սուբյեկտների *(այսուհետ՝ Տնտեսվարող սուբյեկտներ)* ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած պարտավորությունների հսկողության և նրանց կողմից ներկայացված հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ստացման ընթացակարգը՝ ըստ հաջորդական քայլերի և պատասխանատուների:

II. ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի թիվ 1164–Ն որոշման պահանջներին համապատասխան Տնտեսվարող սուբյեկտների կողմից հարկերի և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների ժամկետանց պարտավորություններ (այդ թվում՝ տույժեր և տուգանքներ) ունենալու դեպքում դրա մասին՝ փաստի արձանագրման պահից 5-օրյա ժամկետում տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:
3. «Շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասին և «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի «ա» կետին համապատասխան Տնտեսվարող սուբյեկտները Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը յուրաքանչյուր եռամսյակի համար, մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա վերջին օրը ներկայացնում են համապատասխան տարածքային հարկային մարմնի տեղեկանքը՝ հաշվետու եռամսյակում

հարկերի և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների մասին:

4. Սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում հասցեագրվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչությանը *(այսուհետ՝ Տեսչություն)*:
5. Սույն կարգի 4-րդ կետում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո հաշվետվությունների վերլուծությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում Տեսչությունը ուսումնասիրում է Տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ նախկինում կիրառված պատասխանատվության միջոցները (առկայության դեպքում) և ըստ այդմ համապատասխան պատասխանատվության միջոց կիրառելու համար հարուցում վարչական վարույթ:

III. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՍՏԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

6. Տնտեսվարող սուբյեկտները սույն կարգի 3-րդ կետերով նախատեսված տեղեկատվությունը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության քարտուղարություն թղթային, կամ փոստային, կամ էլեկտրոնային եղանակով՝ ուղարկելով **secretariat@minfin.am** էլեկտրոնային հասցեին (այսուհետ՝ Էլեկտրոնային հասցե):
7. «Շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածներով սահմանված հաշվետվությունները լիազոր մարմնին բացի փաստաթղթային եղանակով ներկայացնելուց կարող են ներկայացնել նաև էլեկտրոնային տեսքով՝ ուղարկելով էլեկտրոնային հասցեին:
8. Տնտեսվարող սուբյեկտների կողմից փաստաթղթային և էլեկտրոնային տեսքով ներկայացված հաշվետվությունների անհամապատասխանության դեպքում հիմք է ընդունվում փաստաթղթային տեսքով ներկայացված հաշվետվությունը:
9. Տնտեսվարող սուբյեկտների կողմից հաշվետվությունները ներկայացվում են պեդեէֆ (PDF) ֆորմատով, բացառությամբ «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ից 3^2-րդ կետերով սահմանված հաշվետվությունների, որոնք

ներկայացվում են մայքրոսոֆթ էքսել (Microsot Exell) ֆորմատով, ստորագրված էլեկտրոնային ստորագրությամբ:

IV. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՍՏԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

10. Տնտեսվարող սուբյեկտները գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացնում իրենց էլեկտրոնայն հասցեի անվանումը, որտեղից ուղարկված հաշվետվություններն են ընդունվում Տեսչության կողմից:
11. Հաշվետվությունների ընդունման գործընթացի իրականացման պատասխանատու է հանդիսանում Տեսչության փաստաթղթերի հաշվառման և վերլուծության բաժինը *(այսուհետ՝ Պատասխանատու անձ)*, որին ընձեռնվում է Տնտեսվարող սուբյեկտների կողմից սույն կարգին համապատասխան ներկայացված հաշվետվությունների ընդունման հասանելիությունը:
12. Էլեկտրոնային հասցեում տվյալների գրանցման (մուտքագրման) ամսաթիվը համարվում է հաշվետվության ներկայացման ամսաթիվ:
13. Մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետի ավարտը Կազմակերպիչը կարող է ներկայացնել հաշվետվության ուղղված տարբերակը: Լիազոր մարմնի համար հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետում՝ ներկայացված վերջին հաշվետվությունը:
14. Էլեկտրոնային հասցեում գրանցված տվյալները և դրանց ներկայացման ամսաթիվը ենթակա չէ փոփոխման:
15. Հաշվետվությունները ստանալուց հետո Պատասխանատու անձի կողմից կատարվում են վերլուծություններ:
16. Հաշվետվությունների վերլուծությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում Պատասխանատու անձն այդ մասին զեկուցում է Տեսչության պետին:
17. Տեսչության պետի հանձնարարությամբ համապատասխան պատասխանատվության միջոց կիրառելու համար հարուցվում է վարչական վարույթ: